ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2021 թվականի N 1053-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին ենթակետով՝

«7.1) ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրատապ օգնության անկանխիկ եղանակով վճարման կարգը՝ համաձայն N 8.1 հավելվածի.».

2) որոշման N 3 հավելվածի N 4 ձևը՝

ա. 23-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-ին կետով՝

«

23.1.	Անձը հաստատող փաստաթղթի տեսակը	անձը հաստատող փաստաթուղթ	- ՀՀ քաղաքացու անձնագիր - ՀՀ ծննդյան վկայական - Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ - Օտարերկրյա փաստաթուղթ (ներառում է նաև օտարերկրյա ծննդյան վկայականը) - Կացության քարտ - Քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական - ՀՀ հատուկ անձնագիր - Նույնականացման քարտ - ՀՀ քաղաքացու բիոմետրիկ անձնագիր

».

բ. 53-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 54-րդ և 55-րդ կետերով՝

«

54.	Վճարման եղանակը՝ կանխիկ/անկանխիկ	հայտարարությամբ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 8.1 հավելվածի 4-7-րդ կետերով սահմանված կարգով
55.	Բանկը՝ անկանխիկ վճարման դեպքում	հայտարարությամբ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 8.1 հավելվածի 4-7-րդ կետերով սահմանված կարգով

».

3) որոշման N 8 հավելվածի՝

ա. 27-րդ կետը «վճարման» բառից առաջ լրացնել «կանխիկ» բառով,

բ. 30-րդ կետի «վճարման ցուցակի» բառերը փոխարինել «կանխիկ վճարման ցուցակի (այսուհետ՝ վճարման ցուցակ)» բառերով,

գ. 47-րդ կետը «ցուցակները» բառից առաջ լրացնել «վճարման» բառով.

4) որոշման N 13 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման հավելվածում ներառված Ծառայության տարածքային կենտրոն-

ները յուրաքանչյուր ամիս ընտանիքների անապահովության գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությանն (այսուհետ՝ Կազմակերպություն) են տրամադրում տեղեկատվություն նպաստառու ընտանիքների, անձանց և նրանց նպաստի չափի մասին, որոնց հիման վրա Կազմակերպությունը կազմում և Ծառայությանն է տրամադրում նպաստների ֆինանսական միջոցների մասին նախնական հայտ-պահանջագրերը: Ծառայությունը կազմում և Ֆինանսական միջոցների մասին հայտ-պահանջագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:».

5) որոշումը լրացնել N 8.1 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ